05.03.24 - 05.03.24
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Պալեանների անվան դահլիճ

Ս.թ. մարտի 5-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի կունենա «Երիտասարդ հետազոտողների ասոցիացիա»-ի բացման արարողությունը:

Միջոցառումը նպատակ ունի ծանոթացնելու «Երիտասարդ հետազոտողների ասոցիացիա»-ի գործունեությանը, որի հիմնական նպատակն է խթանել սովորողների վերլուծական միտքը, հնարավորություններ տալ սեփական հետազոտական աշխատանքները ներկայացնելու, ինչպես նաև քննարկումներ անցկացնելու ֆակուլտետի առաջատար մասնագետների հետ:

Միջոցառման շրջանակում ելույթներով հանդես կգան ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Տիգրան Եփրեմյանը, փոխդեկան Գոռ Պետրոսյանը՝ հանգամանորեն ներկայացնելով ծրագրի նպատակները, ինչպես նաև հետազոտական աշխատանքների կարևորությունը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am